այր մըն է երեք լուսամուտներով և կրկին սիւներով, կը թուի թէ քրիստոնեաները յետոյ գեղեցկացուցին զայն եկեղեցիի վերածելով, որովհետև կ'ըսուի թէ Ս. Յակոբ Տեառնեղբայրը երբ լսեց մեր Տիրոջ ըմբռնումը և չարչարանքները՝ հոս արգելափակուեցաւ «երդմամբ ոչ ուտել և ոչ ըմպել մինչև տեսցէ զփրկիչն աշխարհի ակներև յարուցեալ ի մեռելոց»։ Յիսուս յետ յարութեան երևցաւ հոս իր եղբօր Ս. Յակոբայ ըստ մարմնոյ, և անոր առջև դրաւ սեղան եւ հաց՝ ըսելով ով իմ եղբայրս կ'ը այս հացը, վասնզի որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առաւ, ու մխիթարեց զայն։ Կերպով մը Ս. Պօղոս ալ կը վկայէ ըսելով «ապա երևեցաւ Յակոբայ» (Ա. Կորնթ. ԺԵ. 7)։ Այս այրը այժմ անխնամ մնացած է (Հան. էջ 290(*))։

Բ. դարուն՝ Տաճարին հարաւ-արևելքը՝ ի պատիւ Ս. Յակոբի կանգնուած էր սիւն մը (Հեգեսիպպոս, Մեկնութիւնք)։

15. Այն տեղը ուր Ս. Կոյսը աղօթեց Ս. Ստեփանոսի համար. — *Առաքելոց այրէն դէպի հիւսիս՝ հողին մէջ*

(*) Շարթր քաղաքի (Բարիզի մօտ) մատենադարանին մէջ գտնուած եւ յունարէնէ լատիներէնի թարգմանուած Ժ. դարու ձեռագրի մը համաձայն, զոր Բոլլանդեանները հրատարակած են 1889ին, Դ. դարուն Ս. Տեառնեղբօր գերեզմանին վրայ վկայարան մը կը շինուի եւ նորագիւտ նշխարներէն մաս մը հոն կը փոխադրուի, որ բոլորովին տարբեր է Ս. Յակոբայ վերոյիշեալ այրէն։

Յովսափատի Ս. Տեառնեղբայր վկայարանը յետոյ եկեղեցիի վերածուելով՝ Անտասաս վրդ.ի վանորէից ցուցակին մէջ կը կոչուի «Բարուվանք, որ Տեառնեղբօրն է, զոր ընկալաւ վէմն»։ Ինչ ինչ ձեռագիրներու մէջ ալ կը գտնուի Ս. Տեառնեղբօր եկեղեցիին յիշատակութիւնը Յովսափատի մէջ։ Մանրամասնութեանց համար տեսնել Հ. Վ. Ե. (էջ 1-6)։